ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ
Տնօրեն Դ. Կոստանդյան
«_____» _____2023թ.

ՀՈԳԵԲԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ
2023-2024 ուսումնական տարի

Հոգեբան՝ Հ. Արզումանյան
Ուսումնական գծով փոխտնօրեն՝ Ս. Ավանեսյան

2023թ.

ՀՈԳԵԲԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Աշխատանքի ուղղությունները		Կատարման ժամկետ	Իրականացվող գործողություններ
1.	**Պլանավորում և նախապատրաստական աշխատանքներ**	Սեպտեմբեր 1-15	Նոր ուսումնական տարվա անելիքների պլանավորում
2.	**Հոգեբանական ուսումնասիրություն և դիտարկում**	Ուսումնական տարվա ընթացքում	Տարիքային տարբեր փուլերում գտնվող սովորողների անհատական առանձնահատկությունների, հակումների, նրանց ներուժի բացահայտում
		Սեպտեմբեր Ուսումնական տարվա ընթացքում	Երեխայի անձի կայացումը (ինքնահաստատում և ինքնադրսևորում) դժվարացնող, խոչընդոտող պայմանների հայտնաբերում
		Սեպտեմբեր Ուսումնական տարվա ընթացքում	Կրթական նոր միջավայրին հարմարվելու կարողությունների և դժվարությունների բացահայտման նպատակով այլ հաստատությունից տեղափոխված աշակերտների դիտարկում
		Ուսումնական տարվա ընթացքում	Սովորողի ցածր առաջադիմության, կարգապահական խախտումների, ինչպես նաև սոցիալապես ակտիվ անձի ձևավորմանը խոչընդոտող, միջանձնային հարաբերություններում առաջացած խնդիրների հոգեբանական պատճառների ուսումնասիրում
3.	**Մեթոդական աշխատանք**	Ուսումնական տարվա ընթացքում	Մասնակցություն սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացներին
		Ուսումնական տարվա ընթացքում	Մասնակցություն ԿԱՊԿ ունեցող սովորողների ԱՈՒՊ-ների և դրանց իրականացման գործընթացին
		Ուսումնական տարվա ընթացքում	Մասնակցություն կյանքի դժվար իրավիճակում հայտնված, ԿԱՊԿ, զարգացման որևէ խնդիր, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող երեխայի հետազոտում և աջակցության պլանների մշակում, մշտադիտարկում
4.	**Խորհրդատվություն**	Ուսումնական տարվա ընթացքում	Սովորողին, մանկավարժներին, ծնողներին՝ ուղղված սովորողի հոգեկան առողջության հետ կապված խնդիրների լուծմանը, հոգեբանական խնդիրների (այդ թվում՝ հուզակամային) հաղթահարմանն ուղղված խորհրդատվության տրամադրում
		Ուսումնական տարվա ընթացքում	Սովորողներին, մանկավարժներին, ծնողներին սոցիալ-հոգեբանական իրազեկության բարձրացման ուղղությամբ խորհրդատվության տրամադրում

		Ուսումնական տարվա ընթացքում	Ծնողներին, մանկավարժներին և կրթական գործընթացի այլ մասնակիցներին սովորողների զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերով, ինչպես նաև երեխայի զարգացման համար լիարժեք պայմանների (այդ թվում՝ առանձնահատուկ) ստեղծման վերաբերյալ տեղեկատվության, հոգեբանական խորհրդատվության տրամադրում
5.	**Հոգեբանական աջակցություն**	Ուսումնական տարվա ընթացքում	Բռնության և բուլինգի ենթարկված սովորողներին հոգեբանական աջակցության տրամադրում, աշխատանքների իրականացում դրանց կանխարգելման ուղղությամբ
6.	**Տունայց**	Ուսումնական տարվա ընթացքում	Սովորողի մանկավարժահոգեբանական աջակցության թիմի հետ համատեղ ծնողների մասնակցության ապահովում սովորողի ԱՈՒՊ-ով նախատեսված աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացին, անհրաժեշտության դեպքում տունայցի կազմակերպում
7.	**Կանխարգելիչ, տեղեկատվական, լուսավորչական աշխատանք**	Ուսումնական տարվա ընթացքում	Համապատասխան կանխարգելիչ աշխատանքների կազմակերպում՝ ուղղված ցածր առաջադիմության, կարգապահական խախտումների, ինչպես նաև սոցիալապես ակտիվ անձի ձևավորմանը խոչընդոտող, միջանձնային հարաբերություններում առաջացած խնդիրների հաղթահարմանը
		Ուսումնական տարվա ընթացքում	Ծնողներին, մանկավարժներին և կրթական գործընթացի այլ մասնակիցներին սովորողների զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերում հոգեբանական խորհրդատվությամբ աջակցություն, երեխայի զարգացման համար լիարժեք պայմանների (այդ թվում՝ առանձնահատուկ) ստեղծման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում
		Ուսումնական տարվա ընթացքում	Սովորողների անհատական հոգեբանական առանձնահատկությունների՝ խառնվածքի, կարողությունների, ընդունակությունների, նախասիրությունների, հակումների, հետաքրքրությունների, պահանջմունքների, դրդապատճառների բացահայտում՝ կիրառելով հոգեբանամանկավարժական ախտորոշող մեթոդներ
8.	**Համագործակցություն**	Ուսումնական տարվա ընթացքում	Համագործակցություն խմբի մյուս անդամների, ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների հետ, թիմային հանդիպում-քննարկումներին

			մասնակցություն
		Ուսումնական տարվա ընթացքում	Մանկավարժահոգեբանական աջակցության թիմի հետ համատեղ ծնողների մասնակցության ապահովում սովորողի ԱՈՒՊ-ով նախատեսված աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացին
		Ուսումնական տարվա ընթացքում	Այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին՝ մասնակցություն անհրաժեշտության դեպքում
		Ուսումնական տարվա ընթացքում	Անչափահաս սովորողի մասնակցությամբ համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններին մասնակցություն, եթե օրենքով նախատեսված է մանկավարժի կամ հոգեբանի մասնակցության պահանջ
9.	**Անվտանգություն**	Ուսումնական տարվա ընթացքում	Հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների պահպանում
		Ուսումնական տարվա ընթացքում	Սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանություն
10.	**Հաշվետվողականություն**	Ուսումնական տարվա ընթացքում	Աշխատանքային գործունեության տարբեր ուղղությունների կարգավորման և հաշվետվողականության համար համապատասխան փաստաթղթերի վարում
		Մայիս	Իրականացված աշխատանքների վերաբերյալ Հաստատության ղեկավարությանը հաշվետվության ներկայացում